ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 19-ԻՆ ԺԱՄԸ 11:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն Հնդկաստանի Հանրապետություն հայկական պատվիրակության գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը.

2) հանձնարարել ՀՀ գյուղատնտեսության նախարար Գ. Ալավերդյանին՝

ա. մեկամսյա ժամկետում ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել Հնդկաստանից ներմուծվող մսի բոլոր չափանիշները և վերահսկման (ներառելով դրույթ ՀՀ-ի կողմից ներկայացված անասնաբույժ-տեսուչի վերաբերյալ) կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ,

բ. մինչև համապատասխան կարգի հաստատումը՝ Հնդկաստանի Հանրապետությունից թույլատրել մսի ներմուծումը միայն «ALLANA», «AL KABEER GROUP OF COMPANIES», «AMROON FOODS» և «HIND AGRO INDUSTRIES» կազմակերպություններից,

գ. Հնդկաստանի Հանրապետությունից միս արտահանող այլ կազմակերպությունից ՀՀ տարածք մսի ներմուծումը թույլատրել բացառապես աշխատանքային խմբի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում տրված դրական եզրակացության դեպքում,

դ. համագործակցելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանի և ՀՀ առողջապահության նախարար Հ. Քուշկյանի հետ՝ սահմանել խիստ հսկողություն ՀՀ ներմուծվող և արտադրվող մսամթերքի որակի, ինչպես նաև արտադրող օտարերկրյա կազմակերպության՝ միջազգային չափանիշներին համապատասխանության նկատմամբ,

ե. հայկական բոլոր ներկրող ընկերությունների ներկայացուցիչների հետ համատեղ քննարկել մսամթերքի արտադրության ոլորտում որակի չափանիշների պահպանման ու դրա արդյունքում հնարավոր գնաճի հարցերը՝ միաժամանակ վերջիններիս հայտնելով օտարերկրյա կազմակերպությունների համար նախատեսված սահմանափակումների մասին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ